

ք.Երևան

Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Լուսինե Ալեքսանյանի, որը գործում ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «Ա.Գ. ԷՍԹԵՅԹ» ՍՊԸ-ն այսուհետ «Կատարող», ի դեմս տնօրեն Գոհար Պապոյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին :

1. Պայմանագրի առարկան

- 1.1 Սույն պայմանագրով «Կատարող»-ը պարտավորվում է «Պատվիրատու»-ի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ «Պատվիրատու»-ն պարտավորվում է վճարել դրա համար :
- 1.2 «Կատարող»-ը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունը՝ կատարել Մարզ Տավուշ, համայնք Իջևան Իջևան ք. Արցախյան փողոց 6 հասցեում գտնվող անշարժ գույքի մաս հանդիսացող թիվ 11-001-0041-0001-001-000 կադաստրային ծածկագրով Վարչական շենքի և թիվ 11-001-0041-0001-008 կադաստրային ծածկագրով ավտոկայանատեղիի (հանգրվանի) երկու մասնաբաժինների (4 ավտոմեքենաների կայանման համար նախատեսված) շուկայական վարձավճարի (ամսական) գնահատման աշխատանքները;
- 1.3 Գնահատման նպատակը գույքի շուկայական արժեքի որոշելը, գնահատման գործառույթը՝ էկոպարեկային ծառայության կողմից նշված գույքերի վարձակալության դեպքում վարձավճարի չափը որոշելու համար:
- 1.4 Գնահատման աշխատանքներում ընդգրկված որակավորված մասնագետի որակավորման վկայականի համարն է ԳԳ-2022-11, որակավորման վկայականի ժամկետն՝ 24.10.2027թվական :
- 1.5 Աշխատանքները ներառում են շուկայական վարձավճարը որոշելու համար անհրաժեշտ՝ օրենքով ենթադրվող, բոլոր աշխատանքները՝ ներառյալ նշված գույքերի շուկայական վարձավճարի գնահատումը , ինչպես նաև ավտոկայանատեղիի հատվածի հատակագծումը (չափագրումը): Կատարված աշխատանքները ներկայացվելու են համապատասխան փաստաթղթերով, ըստ «Պատվիրատու»-ի կողմից տրամադրված փաստաթղթերի :
- 1.6 Աշխատանքների կատարման ժամկետը՝ աշխատանքների կատարման սկիզբը համարվում է պայմանագրի կնքման օրը, աշխատանքների ավարտը 7 աշխատանքային օր:
- 1.7 Ծառայությունները մատուցված են համարվում «Պատվիրատու»-ի կամ նրա լիազոր ներկայացուցիչի կողմից հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից :
- 1.8 Գնահատման ելակետային տվյալները, ներկայացված փաստաթղթերը, գնահատման ենթադրությունները, նախադրյալները և ,, Հայաստանի Հանրապետությունում գնահատման ստանդարտները, ինչպես նաև գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները սահմանելու մասին,, թիվ N 1355-Ն որոշմամբ սահմանված համապատասխան գնահատման առաջադրանքի դրույթները ներառնված են գնահատման առաջադրանքում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

- 2.1 «Կատարող»-ը պարտավոր է
 - 2.1.1 Ծառայությունը մատուցել պատշաճ որակով.
 - 2.1.2 Օբյեկտիվ կատարել ներկայացված գույքի գնահատման աշխատանքները.
 - 2.1.3 Ծառայությունը մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.6 կետում նշված ժամկետում կամ ժամկետից շուտ «Պատվիրատու»-ի համաձայնությամբ.
 - 2.1.4 «Պատվիրատու»-ի պահանջով 10 օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները.
- 2.2 «Պատվիրատու»-ն պարտավոր է ժամանակին «Կատարող»-ին տրամադրել գնահատման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, ապահովել շարժական գույքի տեղազննումը և անհրաժեշտության դեպքում (ըստ «Կատարող»-ի կողմից ներկայացված պահանջի) ապահովել գույքի տեխնիկական վիճակի ուսումնասիրման համապատասխան փաստաթղթերով :

